

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս
գյուղական համայնքի ղեկավարի 2013 թվականի առաջին կիսամյակին
կատարված աշխատանքների մասին
Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հարգարժան Արշալույս համայնքի բնակիչներ, ավագանու անդամներ,
հյուրեր.

Այսօրվա համայնքի բնակիչների ընդհանուր ժողովում քննարկվելու է իմ,
որպես համայնքի ղեկավարի և ավագանու կողմից 2013 թվականի առաջին
կիսամյակում կայացած աշխատանքների հաշվետվությունը:
Գյուղապետարանի և ավագանու գործունեությունը հաշվետու
ժամանակաշրջանում Ձեր ուշադրությանը կներկայացնենք ըստ
բնագավառների.

1. քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների իրավունքների
պաշտպանության բնագավառում.

հաշվետու ժամանակաշրջանում այս բնագավառում որպես
պարտադիր լիազորություն համայնքի ղեկավարի կողմից ներկայացվել են
համայնքի շահերը բոլոր կարգի հարաբերություններում և
մակարդակներում: Կազմակերպվել է թվով 48 քաղաքացիների
ընդունելություն, հատկացվել է առաջին եռամսյակում՝ 310 , իսկ երկրորդ
եռամսյակում՝ 237 տեղեկանք, 6 քաղաքացու հատկացվել է բնութագիր,
ընթացք է տրվել քաղաքացիների կողմից ներկայացված 71 դիմումների,
որոնցից 30 քաղաքացու հատկացվել է դրամական օգնություն, իսկ մնացած
դիմումներին համապատասխան ընթացք է տրվել: Քաղաքացիների կողմից
այլ բողոքներ չեն եղել:

Հաշվետու ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի կողմից
ձեռնարկվել է միջոցներ կարկտահարության տարերային աղետները
վերացնելու ուղղությամբ՝ համայնքում տեղադրված երկու հակակարկտային
կայանների գործարկման միջոցով, որի շահագործման համար ծախսվել է
60000/ վաթսուն հազար/ դրամ գումար:

2013 թվականի մայիսի 12-ին Արշալույս համայնքում տեղացած կարկուտի
և սելաֆի հետևանքով տուժել է համայնքի 659 բնակչի 447.5 հա
հողատարածք: Արմավիրի մազպետի կողմից ձևավորված մասնագիտական
հանձնաժողովի միջոցով համայնքում կատարվել է ուսումնասիրություններ և
որոշվել է վնասների չափը, այն ներկայացվել է Հայաստանի
Հանրապետության կառավարություն՝ ֆինանսական կամ այլ բնույթի
համարժեք փոխհատուցում ստանալու խնդրանքով: Ցուցաբերվել է
պետական աջակցություն վնասված հողատարածքների մեկ տարվա հողի
հարկի 8372597 /ութ միլիոն երեք հարյուր յոթանասուներկու հազար հինգ
հարյուր իննսունյոթ /22 դրամ չափով և ջրի հարկի՝ 37260490 /երեսունյոթ
միլիոն երկու հարյուր վաթսուն հազար չորս հարյուր իննսուն/ 22 դրամի
չափով:

Հաստատվել է խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի
կողմից ընդունած որոշումները:

2. ֆինանսների բնագավառում.

համայնքի ղեկավարի աշխատակազմը ավագանու հաստատմանն է ներկայացրել համայնքի բյուջեում կատարված փոփոխությունները, ինչպես նաև առաջին եռամսյակի կատարողականը:

համայնքի ղեկավարը տնօրինել է բյուջեի միջոցները և ապահովվել դրանց նպատակային օգտագործումը՝

հավաքագրվել է 30542791 (երեսուն միլիոն հինգ հարյուր քառասուներկու հազար յոթ հարյուր իննսունմեկ) դրամ եկամուտ, որից՝

հողի հարկ	6703261 (41.42%)
հողի վարձավճար	199800 (7.10%)
գույքահարկ շենքերի և շինությունների	688340 (43.02%)
գույքահարկ փոխադրամիջոցների	1912100 (27.61%)
այլ ոչ հարկային եկամուտներ	1377390 (45.91%)
դոտացիա	19157000(50.0%)
տեղական տուրքեր	4900 (0.92%)
պաշտոնական կապիտալ տրանսֆերտներ	500000 (100 %)

կատարվել է 25688841 (քսանհինգ միլիոն վեց հարյուր ութսունութ հազար ութ հարյուր քառասունմեկ) դրամի ծախս, որից՝

աշխատավարձ	9967401
էներգետիկ ծառայություններ	1276900
կապի ծառայություն	103000
համակարգչային ծառայություններ	133800
տեղեկատվական ծառայություններ	47000
մասնագիտական ծառայություններ	306240
մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում	34000
տրանսպորտային նյութեր	1439100
պարտադիր վճարներ	4000
կոմունալ ծառայություններ	1500000
այլ նպաստներ բյուջեից	3861400
<<Կրթություն և մշակույթ>> միացյալ տնօրինություն	1416000
աշխատավարձ	1280000
սուբսիդիաներ ոչ պետական	
սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական կազմակերպություններին	4320000

3. պաշտպանության բնագավառում.

2013 թվականի հունիսի 28-ին համայնքապետարանում անցկացվել է շտաբային ուսումնավարժություն <<ՀԱԷԿ-ի ընդհանուր վթարի դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումների ղեկավարումը>> թեմայով: Համայնքի ղեկավարի կողմից աջակցություն է ցուցաբերվել նաև քաղպաշտպանության մարմինների գործունեության, երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակությանը, զինծառայողների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծմանը:

4. բնապահպանության, քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում.

համայնքի ղեկավարի կողմից կազմակերպվել է համայնքի սանիտարական մաքրման աշխատանքները և վերջինիս հիման վրա իրականացվել բնակչությունից կենցաղային և շինարարական աղբի հավաքումը և տեղափոխումը: Աղբահանությունն իրականացվել է ամենօրյա ռեժիմով: Աղբը կուտակվում է ավագանու որոշմամբ հաստատված աղբավայրում: Առաջին կիսամյակում աղբահանության համար հատկացվել է 1500000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) դրամ:

Համայնքի ղեկավարի կողմից ապահովվել է համայնքի գիշերային լուսավորությունը, ինչպես նաև ձմռան ամիսներին կատարվել է համայնքի փողոցներում կուտակված ձյան մաքրում:

Կազմակերպվել է գերեզմանատների գործունեությունը և դրանց պահպանման աշխատանքները:

5. հողօգտագործման բնագավառում.

իրականացվել է վերահսկողություն համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային օգտագործման նկատմամբ: Սահմանված կարգով իրականացվել է համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի ընթացիկ հաշվառումը:

6. առևտրի և ծառայությունների բնագավառում.

հաշվետու ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի կողմից հսկողություն է իրականացվել առևտրի ծառայությունների ոլորտում:

7. տրանսպորտի բնագավառում.

իր իրավասության սահմաններում կազմակերպել է ճանապարհային անվտանգ երթևեկությունը համայնքային ենթակայության ճանապարհների վրա:

8. կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառում.

հաշվետու ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի կողմից կազմակերպվել է Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի հետ կապված միջոցառումներ: Առաջին եռամսյակի ընթացքում՝ հունվարի 6-ի եկեղեցու տոներին կազմակերպվել են միջոցառումներ եկեղեցու բակում, որտեղ մասնակիցների և մյուս բնակիչների համար եղել են հյուրասիրություններ: Փետրվարի 27-ին, Արշալույսի Սամվել Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոցի հետ կազմակերպվել է միջոցառում նվիրված Սամվել Գրիգորյանի ծննդյան օրվան:

Մարտի 8-ին՝ կանանց միջազգային տոնի առթիվ, 210 ծերության և հիվանդության թոշակառու կանանց հատկացվել է 840000 /ութ հարյուր քառասուն հազար/ դրամ գումար: Իսկ համայնքի 52 ուսանողի հատկացվել է 260000 /երկու հարյուր վաթսուն հազար/ դրամ գումար, ինչպես նաև միջնակարգ դպրոցի ուսուցիչների, <<Կրթություն և մշակույթ>> միացյալ տնօրինության աշխատակիցների, բժշկական ամբուլատորիայի և գյուղապետարանի աշխատակիցներին, համայնքի մի քանի բնակիչներին

նվիրվել է ծաղիկներ, որի համար հատկացվել է 780000 (յոթ հարյուր ութսուն հազար) դրամ:

Ապրիլի 24-ին՝ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված օրը, Արշալույս համայնքի ղեկավարի աշխատակազմը «Օիժեռնակաբերդ»-ում դրել է ծաղկեպսակ:

Մայիսի 9-ին «Կրթություն և մշակույթ» միացյալ տնօրինության, «ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ՀՈԱԿ-ի, բժշկական ամբուլատորիայի, գյուղապետարանի աշխատակիցների, դպրոցի ուսուցիչների և աշակերտների, համայնքի բնակիչների մասնակցությամբ ծաղիկներ են դրվել երկրորդ աշխարհամարտում զոհվածների հուշարձանին: Իսկ համայնքի բնակիչ երկրորդ համաշխարհային պատերազմի վետերանին հատկացվել է 100000 (հարյուր հազար) դրամ:

Մայիսի 28-ին Սարդարապատի ճակատամարտում թվով 2 զոհվածի գերեզմաններին դրվել է ծաղիկներ:

Արշալույս գյուղական համայնքի Սամվել Գրիգորյանի անվան պետական ոչ առևտրային կազմակերպություն միջնակարգ դպրոց հաճախող 12-րդ դասարանն ավարտող աշակերտներին վերջին զանգի օրվա համար հյուրասիրություն կազմակերպելու, ինչպես նաև զանգ և ծաղիկներ նվիրելու համար հատկացվել է 500000 (հինգ հարյուր հազար) դրամ գումար:

Համայնքի ղեկավարն իր անձնական միջոցներով համայնքի միջնակարգ դպրոց հաճախող առաջին դասարանցիներին հատկացրել է ամենօրյա անվճար սնունդ, իսկ ուսանողները երթևեկել են անվճար ուսանողական ավտոբուսով:

9.աշխատանքի և սոցիալական ծառայության բնագավառում.

հատկացվել է դրամական օգնություն սոցիալապես անապահով ընտանիքներին, կերակրողին կորցրած և զոհված ազատամարտիկների ընտանիքներին 3861400 (երեք միլիոն ութ հարյուր վաթսուամեկ հազար չորս հարյուր) դրամ գումար : Հատկացվել է 340000 (երեք հարյուր քառասուն հազար) դրամ գումար համայնքում ծնված 17 երեխաների ծնողների:

Կիրառվել է գույքահարկի գծով արտոնություն համայնքի սոցիալապես անապահով թվով 2 ընտանիքի նկատմամբ 12850 (տասներկու հազար ութ հարյուր հիսուն) դրամ:

Համայնքի բժշկական ամբուլատորիայի շտապ օգնության մեքենայի համար հատկացվել է 450 լիտր դիզելային վառելիք:

Համայնքի ղեկավարն՝ համայնքի բնակչի հուղարկավորության դեպքում, իր անձնական միջոցներով հատկացնում է անվճար դիակառ:

10.գյուղատնտեսության բնագավառում.

կազմակերպվել է համայնքի տարածքում անասնաբուժական ծառայության հակահամաճարակային միջոցառումներ, կենդանիների հիվանդությունների կանխման աշխատանքներ: Համայնքի ղեկավարը պարտադիր լիազորությունների շրջանակում նպաստել է համայնքային սեփականություն համարվող ոռոգման ցանցերի շահագործմանը:

Մարզպետարանից տրամադրվել է 22 կառավարության կողմից հատկացված շուկայական զնից էժան 200 տոննա ազոտական

պարարտանյութ, ավելի քան 27 տոննա դիզելային վառելիք, որը բաժանվել է համայնքի բնակիչներին՝ ըստ ցանկության:

Համայնքի ղեկավարի կողմից կազմակերպվել է հացահատիկահավաք կոմբայնի տեղափոխում, որը կավարտվի կարճ ժամանակահատվածում:

Հաշվետու ժամանակահատվածում համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է 21 որոշում, արձակվել է 11 կարգադրություն՝ ինքնակամ զբաղեցրած հողամասը և ինքնակամ կառուցված օժանդակ կառույցը օրինականացնելու, հասցե տալու, Հայաստանի Հանրապետության Նախագահի ընտրություններին մասնակցող թեկնածուների և կուսակցությունների /կուսակցությունների դաշինքների / քարոզչական պաստառները փակցնելու համար համայնքի տարածքում անվճար տեղեր առանձնացնելու, տեղեմասային կենտրոններ սահմանելու վերաբերյալ:

Ավագանու գործունեությունը կազմակերպվել է հաստատված կանոնակարգի հիման վրա, կայացրած ութ նիստերի միջոցով: Հաշվետու ժամանակաշրջանում համայնքի ավագանու կողմից քննարկվել են համայնքի շահերին վերաբերվող հարցեր և կայացվել են առաջին եռամսյակում 15 և երկրորդ եռամսյակում 18 որոշումներ: Հաստատվել են համայնքի 2013 թվականի բյուջեում կատարված փոփոխությունները, հաստատվել է համայնքի 2013 թվականի բերքի տակ բնակչության տնտեսություններում գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքերը, հաստատվել է կարկուտի հետևանքով տուժած բնակիչների ցուցակը և կարկտահարված հողերի մեկ տարվա հարկը, քննարկվել և հաստատվել է համայնքի շահերից բխող այլ հարցեր:

Հաշվետու ժամանակահատվածում համայնքի ղեկավարի ամենօրյա օգնությամբ իրականացվել են միջնակարգ դպրոցի, բժշկական ամբուլատորիայի արդյունավետ գործունեությունը, որոնք իրենց լիազորությունների սահմաններում բարեխիղճ և պարտաճանաչ կերպով սպասարկել են ազգաբնակչությանը:

Համայնքն ունի այնպիսի կարևոր հիմնախնդիրներ, ինչպիսիք են՝
ա) խմելու ջրի ներանտեսային ցանցի վերանորոգում
բ) որոշման ջրի խողովակաշարի անցկացումը
գ) անկապարտեզի շենքի կառուցումը
դ) մշակույթի տան կապիտալ վերանորոգումը
ե) դպրոցի ֆիզկուլտուրայի դահլիճի վերանորոգումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Զ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2013 թվականի հուլիսի 15
գ. Արշալույս